2014
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) գործունեության վեցերորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը: 2014 թվականը կարելի է համարել շրջադարձային ձեռքբերումների և միևնույն ժամանակ մարտահրավերների տարի, ինչպես ՈԱԱԿ-ի ներքին և արտաքին գործունեության, այնպես էլ միջազգայնացման տեսանկյունից: ՈԱԱԿ-ն ավարտի է բերել նորմատիվային և կառուցվածքային հիմքեր ստեղծելու և 2015 թվականից ՀՀ-ում անհրաժեշտ ծավալով որակի արտաքին ապահովման գործընթացներ՝ հավատարմագրումներ իրականացնելու համար:

2014թ.-ին իրականացվել են մի շարք ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ: Կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ ոլորտը կանոնակարգող փաստաթղթային հենքում, այդ թվում՝«ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ում: Այս փոփոխությունները պայմանավորված են եղել համակարգում առկա մարտահրավերներով և միտված են ծառացած խնդիրների հաղթահարմանը: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը տեղական և միջազգային ծրագրերի շրջանակներում քայլեր է ձեռնարկել իր անձնակազմի, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) կազմի վերապատրաստման համար:

ՈԱԱԿ-ը հետևողական է իր դիրքերի էլ ավելի ամրապնդմանը երկրում և ճանաչմանն ինչպես եվրոպական տարածքում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս: Այդ իսկ պատճառով, Նախարարական գագաթնաժողովում մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչների ու ուղենիշների վերանայումից և հաստատումից հետո, ՈԱԱԿ-ը նախատեսում է դիմել Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության համար: 2014թ.-ին արդեն իսկ իրականացվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ:

Սույն փաստաթղթում ներկայացվում են հաշվետու տարում ՈԱԱԿ-ի կատարած աշխատանքները՝ ըստ 2010-2015 թթ. ռազմավարական ուղղությունների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

1. Որակի ապահովման արտաքին համակարգ 6

1.1. Բարձրագույն կրթության համակարգ..... 6

1.2. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 9

2. ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգ 10

2.1 Մարդկային ռեսուրսների կառավարում.....11

2.2. Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում.....12

2.3. ՈԱԱԿ-ի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում.....13

2.4. ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման նախապատրաստում 13

2.5. ՈԱԱԿ-ի գործընթացների պարբերաբար գնահատում 13

2.6. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում.....16

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ.....19

4. Միջազգայնացում 23

Կրթական համակարգի զարգացման միտումներ և մարտահրավերներ 24

Ներածություն

Ստեղծման օրվանից ՈԱԱԿ-ը, սերտ համագործակցելով շահակիցների հետ, իրականացնում է իր հիմնական առաքելությունը մասնագիտական կրթության որակի հավաստման ոլորտում՝ բավարարելով շահակիցների պանաջներն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման միջոցով: ՈԱԱԿ-ը նաև զգալի աշխատանքներ է իրականացրել՝խթանելով մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման ներքին համակարգի ներդրումն ու զարգացումը: Առաջընթաց է գրանցվել ՀՀ-ում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ: Շահակիցների կողմից տրամադրված հետադարձ կապի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կառույցի գործընթացները զգալի ազդեցություն ունեն մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումների վրա:

ՈԱԱԿ-ն իր գործունեությունն իրականացրել է ըստ հետևյալ ուղղվածությունների.

Արտաքին ուղղվածություն՝ մասնագիտական կրթության համակարգում կատարվել են զգալի փոփոխություններ. մասնագիտական ուսումնական հաստատությունների մեծ մասը որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակման և ներդրման փուլից անցել է ինքնավերլուծության իրականացմանը, որոշ պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ հիմնականում ավարտում են հավատարմագրման նախապատրաստական փուլը: 15 բուհեր, արդեն իսկ անցնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ, ստացել են համապատասխան խորհրդատվություններ, որոնց հիման վրա մշակել են գործընթացների բարելավման պլան-ժամանակացույցեր: Այժմ նշված բուհերը գտնվում են բարելավումների իրականացման փուլում: 2015թ.-ի փետրվարին կայացվել են հավատարմագրման մասին առաջին որոշումները: Ներկա շրջափուլի հավատարմագրումն արտահայտում է ՄՈՒՀ-երի պատրաստակամությունը մտնել բարելավման ցիկլ և ապահովել երկրում կատարվող բարեփոխումների իրականացումը:

Այսպիսի միտումը վկայում է, որ մասնագիտական կրթության համակարգում, մասնավորապես՝ որակի ապահովման տիրույթում, առկա է կայուն ապագա խոստացող դրական տեղաշարժ: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլի իրականացման կայուն ընթացքն ապահովում է անցումը ծրագրային հավատարմագրմանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի մանրամասն ինքնավերլուծությանը և փորձագիտական գնահատման գործընթացների իրականացմանը: Ծրագրային հավատարմագրման շրջանակներում, ըստ մասնագիտությունների, անմիջականորեն կգնահատվեն որակավորումների ձեռքբերման և շնորհման գործընթացում առկա խնդիրներն ու խոչընդոտները և կհավաստվի մասնագետների մրցունակությունը միջազգային աշխատաշուկայում:

Ակտիվ աշխատանքներ են ծավալվել ՄՈՒՀ-երի անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ: Այս նպատակով հաստատությունների տարբեր մակարդակի կառավարող օղակների և անձնակազմի հետ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, աշխատաժողովներ և տրամադրվել են խորհրդատվություններ: Կարևոր է նշել 2014թ. դեկտեմբեր ամսին ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող «Որակի շաբաթ» միջոցառումների շարքը, որի շրջանակներում քննարկվել են ՄՈՒՀ-գործատու կապի ամրապնդման հիմնահարցերը, անդրադարձ է կատարվել մասնագիտության կրթական ծրագրերի

վերջնարդյունքների համապատասխանությանը Որակավորումների ազգային շրջանակին, ՀՀ տրանսազգային կրթության նպատակների իրականացման և հավաստման հիմնախնդիրներին, ինչպես նաև իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքներին և ծրագրային հավատարմագրման մեկնարկի հիմնահարցերին: Որակի շաբաթվա շրջանակներում քննարկվել են նաև ՀՀ կրթական համակարգի մարտահրավերներն ու ռազմավարական զարգացումների ուղղությունները:

Ներքին ուղղվածություն՝ կառույցի գործընթացների հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման, ինչպես նաև իր գործունեության որակի ապահովման նպատակով՝ ՈԱԱԿ-ը հաշվետու տարում՝

- իրականացրել է ընթացիկ գործընթացների գնահատում,
- վերլուծել է գնահատման արդյունքները, որի հիման վրա լրամշակվել և վերանայվել են կառույցի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքը,
- 2013 թվականին Համաշխարհային բանկի «Որակի ապահովման տեխնիկական աջակցություն, ARQATA» ծրագրի շրջանակներում «Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի» (ENQA) իրականացրած նախնական արտաքին գնահատման զեկույցում նշված խորհրդատվությունների հիման վրա մշակվել է միջոցառումների պլան-ժամանակացույց, որն իրականացվել և իրականացվում է՝ ապահովելով շարունակական բարելավման մեխանիզմները,
- սկսել է նախապատրաստական աշխատանքները «Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի» լիիրավ անդամակցության դիմելու նպատակով, մասնավորապես՝ մշակվել է ինքնավերլուծության իրականացման պլանը, ձևավորվել են աշխատանքային խմբերը և սկսվել է իրականացումը,
- կազմակերպել է անձնակազմի և փորձագետների վերապատրաստումներ տարբեր ուղղություններով ՝
  - ռազմավարական կառավարում և ՄՈՒՀ-ի ինքնավարություն,
  - կրթական ծրագրերի բարելավում և գնահատում,
  - ուսանողակենտրոն ուսումնառություն,
  - հետազոտական գործունության խթանում,
  - տրանսազգային կրթություն ապահովող ուսումնական հաստատությունների արտաքին գնահատում,
  - կրթության միջազգայնացում,
  - կրթության կառավարում և այլն:

Վերապատրաստումներն իրականացվել են ինչպես ՀՀ, այնպես էլ մի շարք եվրոպական երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Հոլանդիա, Ավստրիա, Բելգիա, Իսպանիա, Իտալիա, Իռլանդիա, Անգլիա) որակի ապահովման կառույցների և առաջավոր բուհերի հետ համատեղ:

Միջազգային ուղղվածություն՝ ՈԱԱԿ-ը միջազգային մակարդակում, ակտիվ մասնակցելով տարբեր նախաձեռնություններին և միջոցառումներին, ամուր հիմքեր է ստեղծել իր գործունեության միջազգայնացման, միջազգային փորձի ընկալման, տեղայնացման և միջազգային ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ:

Ստորև մանրամասն ներկայացվում են ՈԱԱԿ-ի կատարած աշխատանքները՝ ըստ գործունեության ոլորտների:

1. Որակի ապահովման արտաքին համակարգ

ՀՀ կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման միջոցով՝ հետևյալ երկու գործընթացներով. ինստիտուցիոնալ հավատարմագրում և մասնագիտության կրթական ծրագրի /Ծրագրային/ հավատարմագրում: Պարբերաբար իրականացող անկախ հավատարմագրումների միջոցով, ՈԱԱԿ-ն ապահովում և հավաստում է ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին, նրանց գործունեության արդյունավետությունը և որակի ճանաչումը պետության կողմից՝ դրանով իսկ ապահովելով կրթական համայնքի և հասարակության վստահությունը: ՀՀ մասնագիտական կրթական համակարգում որակի արտաքին ապահովման համակարգի ներդումը հանդես եկավ որպես բարեփոխումների առավել նպատակային իրականացման մեխանիզմ:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում 2014թ.-ին որակի արտաքին ապահովման ոլորտում գրանցվել են զարգացումներ հետևյալ ուղղություններով.

1.1. Բարձրագույն կրթության համակարգ

Հավատարմագրում

- 2014 թվականին ավարտվել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում 2013թ. սկսված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները 5 բարձրագույն ուսումնական հաստատություններում. 2 պետական՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում և 3 ոչ պետական՝Երևանի «Հայբուսակ»,Երևանի գյուղատնտեսական ու «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարաններում:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած “Փորձագիտական խմբի ձևավորման կարգ”-ի պահանջներին համապատասխան՝ձևավորվել և ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցվել են փորձագիտական խմբերը: Յուրաքանչյուր փորձագիտական խումբում ընդգրկվել են 3 տեղացի, 1 միջազգային փորձագետ և 1 ուսանող: Որպես միջազգային փորձագետներ ընտրվել են՝

- **Թեո Վաբելս՝** Ուտրեխտի համալսարանի ընդունելության գծով դեկան, կրթության պրոֆեսոր (Երևանի գյուղատնտեսական համալսարան),
- **Անդրե Գովարտ՝** Բելգիայի Հանրապետությունում Սան Լյուվենի համալսարանի

պրոֆեսոր,ուսումնական պլանների և դասընթացների մշակման բաժնի ղեկավար (Երևանի «Հայբուսակ» համալսարան),

- **Գի Հոգ՝** Վալենսիայի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի խորհրդական, ԵԲԿՏ ձևավորման և որակի ապահովման համակարգի հիմնադիրներից, քաղաքագիտության դոկտոր (ՀՀ պետական կառավարման ակադեմիա),
- **Յան Կորնելիս՝** Բրյուսելի բաց համալսարանի պրոֆեսոր, Միջազգային քաղաքականության գծով պռոռեկտոր («Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան),
- **Մստիսլավ Սոխա՝** Լեհաստանի պետական բարձրագույն կրթության հավատարմագրման կոմիտեի փոխնախագահ (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը):

Ըստ հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

— իրականացվել են ինքնավերլուծության և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
— սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ մշակվել են վերջնական զեկույցները;
— փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

- 2014թ.-ին 1 ուսումնական հաստատություն՝Եվրասիա միջազգային համալսարանը, դիմում-հայտ է ներկայացրել՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու նպատակով:

TEMPUS-ի MAHATMA ծրագրի շրջանակներում 4 բուհեր դիմել են «Կրթության կառավարում» մասնագիտության փորձնական կրթական ծրագրի փորձաքննություն անցնելու համար. մասնավորապես՝

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը,
- Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը,
- Գորիսի պետական համալսարանը,
- Վանաձորի պետական համալսարանը:

Կրթական ծրագրի փորձաքննությունն իրականացվում է եվրոպական առաջավոր բուհերի աջակցությամբ Վրաստանի Որակի բարելավման կենտրոնի հետ համատեղ: ՄՈՒՀ-երն այժմ գտնվում են ինքնավերլուծության իրականացման փուլում: Բուն փորձագիտական գնահատումը կիրականացվի 2015թ.-ին:

Մշտադիտարկում և եզրակացություն բուհերի ինքնավերլուծությունների վերաբերյալ

- ՈԱԱԿ-ի աշխատակիցները Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ծրագրով ուսումնասիրել են ծրագիրն ավարտած 15 ներքոնշյալ ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված ինքնավերլուծության զեկույցները և տվել են մասնագիտական կարծիք.

1. Երևանի պետական համալսարան,
2. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան,
3. Հայսատանի պետական տնտեսագիտական համալսարան,
4. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
5. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա,
6. Երևանի շինարարության և ճարտարապետության պետական համալսարան,
7. Հայասատնի ազգային ագրարային համալսարան,
8. Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ,
9. ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
10. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
11. Գավառի պետական համալսարան,
12. Հայ-ռուսական (սլավոնական համալսարան),
13. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ,
14. Գորիսի պետական համալսարան,
15. Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ:

- 5 բուհերի ինքնավերլուծությունները վերադարձվել են՝ թերությունների վերացման նպատակով: Այնուհետև ՈԱԱԿ-ի աշխատակիցներն ուսումնասիրել են լրամշակված տարբերակները և տվել մասնագիտական կարծիք:
- Նույն ծրագրի շրջանակներում 5 ներքոնշյալ ուսումնական հաստատությունում կատարված աշխատանքների վերահսկողության նպատակով իրականացվել է մոնիտորինգ և ներկայացվել հաշվետվություն.
  - Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ,
  - ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիա,
  - ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն,
  - Եվրասիա միջազգային համալսարան,
  - Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան:

ՈԱԱԿ-ն ուսումնասիրել է բուհերի՝ ըստ փուլերի ներկայացված ընթացիկ հաշվետվությունները և առանձնացրել ուսումնասիրման ենթակա հետևյալ հարցերը.

— պլանավորված առաջադրանքներն ու գործողությունները,
— պլանավորված գործողությունների իրականացման աստիճանը,
— փաստացի ձեռքբերված արդյունքները,
— որքանով են արդյունքները նպաստել տվյալ բուհի դրամաշնորհային ծրագրի նպատակների իրականացմանը:

Իրականացված մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ-երը՝

— ստեղծել են որակի ներքին ապահովման ստորաբաժանումներ և վերջիններս զինել նյութատեխնիկական միջոցներով,
— կազմակերպել են տեղացի և միջազգային փորձագետների կողմից շահակիցների վերապատրաստում և խորհրդատվությունների տրամադրում,
— մշակել, լրամշակել, վերանայել են ուսումնական հաստատության գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքը, շահակիցների հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն ու գործիքները,
— իրականացրել են ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն,
— աշխատակիցներին գործուղել են արտասահմանյան ուսումնական հաստատություններ՝ միջազգային փորձին ծանոթանալու և տեղայնացնելու նպատակով:

1.2. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

- Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի որակյալ մասնագիտական կրթությունն ու ուսուցումը: Այս ոլորտում կատարվող փոփոխությունները պետք է միտված լինեն շուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

  Վերջին տարիներին միջին մասնագիտական կրթական համակարգում ընթանում են ինտենսիվ բարեփոխումներ, որոնք իրենց արտացոլումն են գտել ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացած «Մասնագիտական կրթության բարեփոխումների 2012-2016թթ. ծրագրում», որում կարևորված է նաև կրթության որակի բարելավումն, այնուամենայնիվ, այս համակարգում դեռևս ներդրված չեն որակի ապահովման մեխանիզմներն, առկա չեն որակի ներքին ապահովման միավորները՝ բացառությամբ որոշ հաստատությունների, որոնցում նման միավորներ ձևավորվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացված փորձնական հավատարմագրումների արդյունքում:

  ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցամն (այսուհետ՝ ՄԿՈՒ) համակարգի երկարաժամկետ զարգացման հեռանկարների որոշակիացման և որակի ապահովման մեխանիզմների ներդրման նպատակով ՈԱԱԿ-ը նախաձեռնել է երկխոսության ամրապնդում ՀՀ ՄԿՈՒ համակարգի շահակիցների միջև՝ իրականացնելով.
  — հանդիպում-քննարկումներ,
  — վերապատրաստումներ,
  — աշխատաժողովներ:

- 2014թ.-ից մեկնարկել է ՄԿՈՒ հաստատությունների հետ համագործակցության նոր փուլ՝ անդրադառնալով հետևյալ հիմնախնդիրներին՝
  — իրականացնել վերլուծություն՝ գնահատելով առկա վիճակը, առաջընթացը և հետագա կարիքները,
  — իրականացնել քննարկումներ շահակիցների շրջանում՝ ՄԿՈՒ ազգային և եվրոպական համակարգերի քաղաքականությունների և գերակայությունների համակցման վերաբերյալ:

- Միջին մասնագիտական կրթական համակարգի որակի ապահովման գործընթացների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով՝ որոշվել է որակի բարելավմանը միտված աշխատանքների նոր փուլը մեկնարկել 12 տարածաշրջանային բազմագործառութային քոլեջների հետ: 2014 թվականի ընթացքում 12 տարածաշրջանային քոլեջների տնօրենների և ղեկավար անձնակազմի հետ իրականացվել են հանդիպում-քննարկումներ, որտեղ քննարկվել են որակի ապահովման գործընթացները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ուրվագծվել են վերջիններիս հետ հետագա համագործակցության ուղիները: Որոշվել է.

  — 12 տարածաշրջանային բազմագործառութային քոլեջներում ձևավորել ներքին որակի ապահովմամբ զբաղվող աշխատանքային խմբեր և պատասխանատուներ,
  — ՈԱ աշխատանքային խմբերին ու պատասխանատուներին վերապատրաստել ՈԱԱԿ-ում՝ որակի ներքին ապահովման և փորձագիտական գործունեության վերաբերյալ,
  — փորձնական ինքնավերլուծության իրականացում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից կարևորվող տիրույթների ուղղությամբ:

- Մշակվել է ՄԿՈ ոլորտում որակի ապահովման արտաքին և ներքին համակարգերի ներդրման գործողությունների պլանը:
- Քանի որ որակի ապահովման ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ակտիվության պակասը հիմնականում պայմանավորված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ, ապա որոշվել է մշակել մեխանիզմներ՝ հավատարմագրման գործընթացի ծախսերի կրճատման համար: Վերջիններս գտնվում են մշակման փուլում և 2015 թվականին կներկայացվեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին:
- Պայմանավորվածության համաձայն՝ 12 տարածաշրջանային քոլեջներին ուղարկվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման ձևաչափը՝ դրանց կիրառելիության և առկա փորձի վերաբերյալ հետադարձ կապ տրամադրելու նպատակով: Վերջիններս ներկայացրել են առաջարկություններ՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Այնուհետև ստացված տվյալները ամփոփվել են, դուրս են բերվել ՄԿՈԻ համակարգում ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների կիրառելիության վերաբերյալ տվյալներ և ներկայացվել 12 տարածաշրջանային պետական քոլեջների անձնակազմերին հանդիպման ժամանակ:

2. ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգ

Որակի ապահովման արդյունավետ ներքին համակարգի առկայությունը կազմակերպության հաջողության գրավականն է: ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգը միտված է հասարակության հանդեպ և միջազգային ասպարեզում կառույցի գործընթացների հաշվետվողականությունն ապահովելու,

տեսանելի և թափանցիկ դարձնելու կազմակերպության կողմից իրականացվող ներքին և արտաքին գործընթացների գնահատման արդյունքները, ինչպես նաև որոշելու՝ որքանով են արդյունքները համապատասխանում կազմակերպության նախանշված նպատակներին և նպաստում կառույցի ընդհանուր որակի բարելավմանը: Որակի ներքին ապահովման խնդիրն է ստեղծել այնպիսի համակարգ, որը կապահովի համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր՝ուղղված ՈԱԱԿ-ի ներքին գործընթացների որակը բացահայտելուն, ապահովելուն և բարելավելուն:

ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման տիրույթում 2014թ.-ին գրանցվել են զարգացումներ հետևյալ ուղղություններով.

2.1 Մարդկային ռեսուրսների կառավարում

- Համաձայն կազմակերպական կառուցվածքի՝ ՈԱԱԿ-ն ունի 3 բաժին՝ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության, քաղաքականության մշակման և իրականացման, ՈԱԱԿ քարտուղարություն և վարչաօժանդակ կազմ:

ՈԱԱԿ անձնակազմ	Քանակ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական կազմ	6
6. Օժանդակ կազմ	3
Ընդամենը	22

- Հաշվի առնելով, որ որակի ապահովումը ՀՀ-ում նոր զարգացող ոլորտ է՝մրցունակ անձնակազմի հավաքագրումը մարտահրավեր է: Այդ իսկ պատճառով իր առաքելությունն իրականացնելու, գործունեության որակն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը հաշվետու տարում՝
  - մշակել է անձնակազմի հավաքագրման և կառավարման քաղաքականությունը,
  - վերանայել և հաստատել է անձնակազմի պաշտոնների անձնագրերը,
  - պարբերաբար կազմակերպել է անձնակազմի կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումներ:
- Ուսումնասիրելով հավատարմագրման գործընթացներում ներգրավված բուհերի, միջազգային և տեղացի փորձագետների հետադարձ կապը, միջազգային զարգացումներն ու միտումները՝ձևավորվել են անձնակազմի մասնագիտական զարգացման ուղղություններն ու իրականացման եղանակները՝
  1. վերապատրաստումներ, աշխատաժողովներ ինչպես եվրոպական մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում կրթական համակարգի տարբեր հիմնահարցերի շուրջ՝ տրանսազգային կրթության հիմնախնդիրներ, կրթական վերջնարդյունքների ձևավորում և գնահատում, հետազոտական

գործունեության կազմակերպում, ՄՈՒՀ-երի կառավարման հիմնախնդիրներ, կրթության միջազգայնացում, բուհ-գործատու համագործակցություն և այլն,

2. ՈԱԱԿ-ի փորձառու մասնագետների կողմից խորհրդատվությունների տրամադրում,
3. տարբեր բուհերում փորձագիտական այցերին և քննարկումներին մասնակցություն,
4. հանդիպումներ ոլորտում մեծ փորձ և ներդրում ունեցող մասնագետների հետ,
5. մասնագիտացում՝ ըստ ոլորտների. յուրաքանչյուր մասնագիտական ոլորտ առավել խորը վերլուծելու նպատակով, անհրաժեշտություն առաջացավ ոլորտների ուսումնասիրությունը բաշխել ըստ աշխատակիցների՝ դրանով իսկ նպաստելով վերջիններիս որևէ ոլորտում նեղ մասնագիտացմանը (օր.՝կրթական ծրագրեր, ուսանողների գնահատում, դասախոսական կազմ, միջազգայնացում, հետազոտություն, որակի ներքին ապահովում և այլն): Ոլորտային ուսումնասիրությունները հնարավորություն կտան՝

   - վերհանել տիրույթի հիմնախնդիրները,
   - բացահայտել լավագույն փորձը և տարածել շահակիցների շրջանում,
   - ըստ տիրույթների մշակել ուղենիշեր հավատարմագրման գործընթացն արդյունավետ կազմակեպելու համար,
   - լրամշակել փորձագետների վերապատրաստման փաթեթներ:

- Պարբերաբար իրականացվել են հարցումներ պարզելու անձնակազմի բավարարվածությունը՝
   - աշխատանքային միջավայրից (83.3%),
   - անձնական և մասնագիտական զարգացման հնարավորություններից (75%)
   - աշխատանքային ծանրաբեռնվածությունից (58.2%)
   - հանձնարարականների հստակությունից (74.9%)
   - որոշումների կայացման գործընթացում ներգրավվածությունից (70.7%),
   - իրականացված վերապատրաստություններից, աշխատաժողովներից և խորհրդատվությունից (91.7%):

2.2. Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում

- ՈԱԱԿ-ի Խորհրդատուների Խորհրդում միջազգային փորձագետներին առցանց ներգրավելու, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների առցանց ներկայությունն ապահովելու (երկրից բացակայելու դեպքում), ինչպես նաև աշխատակիցների հեռավար վերապատրաստումներ կազմակերպելու համար միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռք են բերվել համապատասխան տեխնիկական միջոցներ:
- ՈԱԱԿ-ի շենքային և նյութատեխնիկական բազայի կիրառելիությունն ու արդյունավետությունը գնահատելու նպատակով պարբերաբար իրականացվել են հարցումներ: Ինչպես ցույց են տալիս հարցումների արդյունքները, բոլոր աշխատակիցները կարծում են, որ ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով և պայմաններով իրենց պարտականություններն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

2.3. ՈԱԱԿ-ի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

- Ավարտական փուլում են ՈԱԱԿ-ի նորացված կայք-էջի լրամշակման աշխատանքները՝ միտված՝
  - ապահովելու կառույցի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
  - պատշաճ կերպով լուսաբանելու իրականացվող հավատարմագրման գործընթացները,
  - հրապարակելու փորձագիտական զեկույցները, հավատարմագրման մասին որոշումները,
  - տեղադրելու համապատասխան տեղեկատվություն "Հավատարմագրման պետական գրանցամատյան" բաժնում:
- 2014թ.-ին լրամշակվել է կառույցի ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը:

2.4. ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման նախապատրաստում

- «Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի» կողմից արտաքին գնահատման միջոցով ՈԱԱԿ-ը հնարավորություն կունենա գնահատելու՝ որքանով են իրականացվող գործընթացները համապատասխանում Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես երկրում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ կառույցի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից: Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային կառույցների վստահությունը բարձրացնելու նպատակով՝ ՈԱԱԿ-ը նախատեսում է դիմել Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության համար: Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցությանը նախապատրաստվելը նաև ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականցվող Twinning ծրագրի վերջնանպատակներից մեկն է: Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի դրական գնահատականը կապահովի նաև ՀՀ կրթական համայնքի և հասարակության վստահությունը ՈԱԱԿ-ի գործունեության նկատմամբ: Հաշվետու տարում մշակվել է ՈԱԱԿ-ի ինքնավերլուծության իրականացման պլանը և ձևավորվել են աշխատանքային խմբերը:

2.5. ՈԱԱԿ-ի գործընթացների պարբերաբար գնահատում

- Հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով կատարվել է իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության համակողմանի վերլուծություն: Վերջինս հնարավորություն է տվել բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, ուժեղ և թույլ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու գործընթացն ինքնին: Հետազոտության իրականացման համար կիրառվել է խառը տիպի մեթոդաբանություն՝

— նկարագրական և քանակական կողմն ապահովելու համար նպատակահարմար է եղել անանուն առցանց հարցման մեթոդի կիրառումը (ՀՀ ՄՈՒՀ-երում որակի ապահովման գործընթացներից լավագույնս իրազեկված անձանց և գործընթացն իրականացրած փորձագետների շրջանում), որը հնարավորություն է տվել հարցման մասնակիցներին անկեղծորեն արտահայտել իրենց կարծիքը, և բարձրացրել է ստացված տեղեկատվության հուսալիությունը,
— որակական տեղեկատվության հավաքագրման համար նպատակահարմար է եղել ֆոկուս խմբերի մեթոդը, որը հավատարմագրման գործընթացի շուրջ մանրամասն տեղեկատվություն ստանալու հնարավորություն է տվել՝ ապահովելով հավատարմագրման գործընթացում ընդգրկված հիմնական խմբերի (փորձագետներ, բուհերում ինքնավերլուծություն իրականացրած անձիք և որակի ապահովման պատասխանատուներ) խորքային ներգրավվածությունը հետազոտությանը: Հետազոտությունն իրականացվել է՝ ըստ գործընթացի իրականացման հաջորդական փուլերի:

Հավատարմագրման գործընթացի արդյունավետությունը և օգտակարությունն՝ ըստ փուլերի	% ըստ տրված պատասխանների ընդհանուր հաճախականության
1. Ինքնավերլուծության գործընթաց	75%
2. Նախնական գնահատման գործընթաց	96.7%
3. Փորձագիտական այց	100%
4. Փորձագիտական զեկույց	97%
Ընդամենը	100%

Ինքնավերլուծություն

Ինքնավերլուծության գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստելու համար ՈԱԱԿ-ը կիրառում է մի շարք ուղենիշեր, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափեր, որոնք Հավատարմագրման կարգի բաղկացուցիչ մասն են կազմում: Վերոնշյալ ձևաչափերի արդյունավետությունը, կիրառելիությունը գնահատելու նպատակով ուսումնասիրվել է շահակիցների բավարարվածությունը ձևաչափերից, ինչպես նաև՝ կիրառելիս ինչպիսի խոչընդոտների են հանդիպել կառուցվածքային և բովանդակային առումով: Ընդհանրացնելով հետազոտությունների արդյունքները՝ կարելի է ասել, որ խոչընդոտները, հիմնականում, տարբեր չափորոշիչների տարընմբռնումներն են (25%) և տերմինների մեկնաբանման խնդիրները (13%):

Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև ինքնավերլուծության իրականացման գործընթացում ՈԱԱԿ-ի կողմից տրամադրված խորհրդատվությունների արդյունավետությանը:

Տրամադրված խորհրդատվություններն ուսումնասիրվել են հետևյալ տեսանկյունից՝
— որքանով արդյունավետ էին (75%),
— որքանով համակարգված էին (67%),
— որքանով նպատակային էին (66%)
— որքանով թիրախավորված էին (75%):

Բուհերում ՈԱԱԿ-ի կողմից իրականացված խորհրդատվություններն, ընդհանուր առմամբ, ծառայել են իրենց նպատակին:

Ինքնավերլուծության և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն փորձագետների կողմից

Փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ՄՈՒՀ-ի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել,
- հիմնախնդիրներ/հարցեր դուրս բերել փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով,
- փորձագիտական զեկույց պատրաստել:

Հիմք ընդունելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է եղել: Փորձաքննության այս փուլը ծառայել է իր նպատակին, փորձագետները կարողացել են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը(96.9%): Արդյունավետ կերպով դուրս են բերվել այն հիմնախնդիրները/հարցերը, որոնք բավարար կերպով ներկայացված չեն, խնդրահարույց են և ենթակա են ուսումնասիրման փորձագիտական այցի ընթացքում(96.3%): Փորձագետների պնդմամբ վերջինս շատ օգտակար է եղել նաև փորձագիտական այցերն արդյունավետ կազմակերպելու և փորձագիտական զեկույցը պատրաստելու (87.5%) տեսանկյունից:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը հավատարմագրման գործընթացի մի մասն է, որի ընթացքում փորձագետները գնահատում են ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, հանդիպումների և հարցումների միջոցով ձեռք են բերում լրացուցիչ տեղեկատվություն, ուսումնասիրում են կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ավելի լավ պատկերացում կազմելու ուսումնական հաստատության գործունեության մասին:

Հետազոտության միջոցով գնահատվել է՝ որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը՝ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (75%), առանձին հանդիպումների արդյունավետությունը (85%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (90%): Անդրադարձ է կատարվել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե):

Փորձագիտական զեկույց

Ուսումնական հաստատություններ փորձագիտական այցերից հետո փորձագիտական խմբերի ղեկավարները և ՈԱԱԿ-ի համակարգողների օժանդակությամբ պատրաստում են փորձագիտական զեկույցները՝ հիմնվելով ինքնավերլուծության ու փաստաթղթերի ուսումնասիրության և այցի ընթացքում վերհանված փաստերի վրա: Փորձագիտական զեկույցի կառուցվածքային տարրերի գնահատումից բացի, անդրադարձ է կատարվել նաև զեկույցի բովանդակային խնդիրներին: Հիմք ընդունելով բուհերի շրջանում իրականացված հետազոտության

արդյունքները՝ կարելի է ասել, որ փորձագիտական զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ինչպես բուհի նոր ռազմավարության ընտրության, այնպես էլ բուհի ընդհանուր վարչարարության և կառավարման վրա: Զեկույցի լեզուն հիմնականում մատչելի է եղել բուհերի համար:

Ինչպես հարցումների, այնպես էլ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հետազոտության մասնակիցները նշել են, որ զեկույցում նշված թերություններն ուղեցույց են հանդիսացել հետագա գործունեության համար: Իսկ զեկույցում նշված խորհրդատվություններն օգտակար են եղել բուհի հետագա զարգացման և բարելավման տեսանկյունից, եղել են հասկանալի, սակայն իրականացման իրատեսականության տեսանկյունից որոշ դեպքում տարակարծություններ կան:

Ընդհանրացնելով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները և փորձագետների դիտարկումները՝ կարելի է փաստել, որ կրթական համակարգի զարգացման և առաջխաղացման գործում հավատարմագրման գործընթացի ազդեցությունը բավական մեծ է: Հաստատությունները հավատարմագրման գործընթացը համարում են արդյունավետ գործիք իրենց գործունեությունը կանոնակարգելու և հստակեցնելու համար: Փորձագիտական զեկույցները կարևոր դեր են խաղում բուհի թույլ, ուժեղ կողմերը և մատահրավերները բացահայտելու տեսանկյունից: Զեկույցներում նշված խորհրդատվությունները հիմք են հանդիսանում բարելավմանը միտված քայլերի պլանավորման համար:

- ՀՀ կրթական համակարգի երկրորդ համակարգային վերլուծության համար հստակեցվել են ուսումնասիրության ուղղությունները, ընտրվել են մեթոդները: Բուն ուսումնասիրությունը նախատեսված է իրականացնել 2015թ.-ին: Հետազոտության շրջանակներում կուսումնասիրվի՝
  - հավատարմագրման գործընթացը և որակի ապահովման հաստատված գործընթացներն ինչպիսի ազդեցություն են ունեցել ՀՀ կրթական համակարգի վրա,
  - ՄՈՒՀ-երում որակի ապահովման համակարգի առկա վիճակը և խնդիրները ինստիտուցիոնալ առումով:

  2015թ.-ին իրականացվելիք երկրորդ համակարգային վերլուծության արդյունքները համեմատելով 2011թ.-ի առաջին համակարգային վերլուծության արդյունքների հետ՝ հնարավոր կլինի տեսնել զարգացման միտումները և գնահատել համակարգային փոփոխությունները:

2.6. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

- Նորմատիվ ակտերի փոփոխությունների, արտաքին և ներքին գործընթացների պարբերաբար գնահատման, հավատարմագրման գործընթացի արդյունավետության համակողմանի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման գործիքակազմը և շահակիցների հետադարձ կապի մեխանիզմներն ու գործիքները: Վերջիններս համակարգված կերպով կիրառվել են, վերլուծվել, իսկ արդյունքները հիմք են հանդիսացել համապատասխան գործընթացների բարելավման և կառույցի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքի լրամշակման և վերանայման համար.

— մշակվել է ՀՀ Կառավարության որոշման նախագիծ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Առաջարկվել է հստակեցնել ՈԱԱԿ-ի նպատակները, գործառույթները, փոփոխել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի քանակական ու ներկայացուցչական կազմը և նախագահի ընտրության ձևը: Նշված փոփոխություններն ու լրացումները կնպաստեն ՈԱԱԿ-ի անկախությանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը և կերաշխավորեն որակի ձևավորման փուլից անցումը կայացման փուլ:

— ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը հավատարմագրման գործընթացների փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրության և պարբերաբար իրականացված ներքին հանդիպում-քննարկումների արդյունքում հստակեցրել է գնահատման մոտեցումներն ու սկզբունքները, ինչպես նաև հիմնավորված որոշումների կայացման համար ներկայացրել է առաջարկություններ հավատարմագրման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ մասնավորապես հավատարմագրման ժամկետները փոփոխելու և պարբերաբար ներքին գնահատում իրականացնելու համար: Առաջարկությունները միտված են ապահովելու համակարգի շարունակական զարգացումը: Առաջարկությունները քննարկվել են ՀՀ կառավարության աշխատակազմի և ԿԳ նախարարի հետ: ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 11-ի N 1397-Ն որոշմամբ ընդունվել են «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի փոփոխություններն ու լրացումները:

— Մշակվել են «Պետական հավատարմագրման վկայական»-ի և «Պետական հավատարմագրման վկայականի ներդիր»-ի ձևաթղթերը, որոնք համաձայնեցվել և հաստատվել են ԿԳ նախարարության կողմից:

— Մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմի ու ԿԳՆ-ի հետ քննարկվել է «Հավատարմագրման պետական գրանցամատյանի վարման կարգ»-ի նախագիծը: Հավատարմագրման պետական գրանցամատյանը հնարավորություն կտա խորհրդատվական տեղեկատվություն տրամադրել հանրությանը, տեղական, միջազգային և այլ շահագրգիռ կազմակերպություններին հավատարմագրված ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի մասին:

— Վերանայվել է «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ»-ը: Ձեռնարկում մանրամասն նկարագրված են Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, ՄՈՒՀ- երի և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացներն ու ընթացակարգերը, դրանց տևողությունը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի, փորձագետների և ՄՈՒՀ-երի պատասխանատվությունների և պարտավորությունների շրջանակը: Ձեռնարկը միտված է համակարգելու շահակիցների միջև փոխհարաբերությունները և հիմք ապահովելու անկախ և անկողմակալ գնահատում իրականացնելու, դրական փորձը բացահայտելու և տարածելու

ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելու համակարգի զարգացմանը և որակի մշակույթի արմատավորմանը: Ձեռնարկի վերանայման համար հիմք են հանդիսացել իրավական ակտերի փոփոխությունները, ՀՀ մասնագիտական կրթության համակարգի կարիքների գնահատումն ու իրավիճակի վերլուծությունը, շահակիցների (ազգային և միջազգային) հետադարձ կապն ու կարիքների ուսումնասիրությունը: Շահակիցների ակտիվ ներգրավվածությունը ձեռնարկի վերանայմանն ապահովում է վերջինիս կիրառելիությունը և նպաստում ՈԱԱԿ-ի առաքելության իրականացմանը՝ ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովմանը և հավատարմագրման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, հետևաբար, ազգային և միջազգային մակարդակներում որակավորումների ճանաչելիությանը: Ձեռնարկի վերջնական խմբագրումն ու տպագրությունը նախատեսվում է 2015թ.-ի առաջին կեսին:

— Վերանայվել և լրամշակվել են հավատարմագրման գործընթացը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը՝

- ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը,
- ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման դիմում-հայտերի միասնական ձևերը,
- հաստատությունների և փորձագետների հետ կնքվող պայմանագրերը,
- ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափերը,
- նախնական գնահատման ձևաչափը,
- փորձագիտական զեկույցի ձևաչափը,
- թերությունների վերացման ծրագրի ձևաչափը,
- թերությունների վերացման ծրագրի գնահատման ձևաչափը,
- ՈԱԱԿ-ի եզրակացության ձևաչափը,
- Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ձևաչափը:

— Մշակվել են փորձագետների ընտրության ու վերապատրաստման հայեցակարգը և մեթոդական ցուցումները: Նոր հայեցակարգի մշակումը հիմնականում պայմանավորված է հավատարմագրման գործընթացներում փորձաքննության համահավասար մոտեցում և ընկալում ապահովելու, կուտակված փորձը փոխանակելու և փոխանցելու, ինչպես նաև նոր փորձագետների առավել մեծ ներգրավում ապահովելու նպատակով:

— Մշակվել է Ֆինանսական ռեսուրսների բաշխման ու կառավարման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նախագծերը: Լրամշակման փուլում է գտնվում ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2011 թ. նոյեմբերի 23-ի N 14.1/[97088]-11 որոշմամբ հաստատված հավատարմագրման գործընթացի սակագները:

— Մշակվել է ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը կնպաստի ՈԱԱԿ-ի գործընթացների հաշվետվողականության ու թափանցիկության ապահովմանը: Որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքների շրջանակը միտված է գնահատելու ՈԱԱԿ-ի կառավարման և վերահսկման գործընթացների արդյունավետությունը:

— Մշակվել է ՈԱԱԿ-ի հասարակայնության հետ կապերի ապահովման քաղաքականությունը՝միտված ՈԱԱԿ-ի գործունեության լուսաբանման ապահովմանը և ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահություն ձևավորմանը:

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ

Որպես ռազմավարական նպատակ ՈԱԱԿ-ը նախանշել է մասնագիտական կրթության ծառայությունների շարունակական բարելավումը շահակիցների հետ սերտ համագործակցության միջոցով: Վերջիններս ներգրավված են ՈԱԱԿ-ի գործունեության ոլորտների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Տարբեր թիրախային խմբերի հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, աշխատաժողովներ՝

— հետադարձ կապ ստանալու,
— ՈԱԱԿ-ի գործունեության հաշվետվողականությունն ապահովելու,
— իրականացվող գործընթացների և միջոցառումների վերաբերյալ իրազեկելու,
— համակարգային խնդիրները և որակի ապահովման ոլորտում վերջին զարգացումները քննարկելու,
— կրթական համակարգի վերաբերյալ հավաստի տվյալներ հավաքագրելու,
— շահակիցներին ՈԱԱԿ-ի գործընթացներում ներգրավելու նպատակով:

Շահակիցների հետ համագործակցության տիրույթում 2014թ.-ի ՈԱԱԿ-ի ձեռքբերումները հետևյալն են՝

- Պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ տարբեր շահակիցների հետ (դասախոսներ, ՄՈՒՀ- երի վարչական անձնակազմ, որակի ապահովման պատասխանատուներ, ուսանողներ, գործատուներ, եվրոպական և ազգային ՄՈՒՀ-երի շրջանավատներ) ՝միտված

— ՀՀ-ում տրանսազգային կրթության հիմնախնդիրների բացահայտմանն ու հաղթահարմանը,
— կրթական ծրագրերի բարելավմանն ու գնահատմանը,
— կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցմանը որակավորումների ազգային շրջանակին,
— ECTS կրեդիտների բաշխմանը,
— ՄՈՒՀ-երի կառավարման խնդիրների վերհանմանը,
— փոփոխությունների կառավարմանը,
— գործատու-բուհ կապի ամրապնդմանը,
— ՀՀ-ում կրթության կառավարիչների պատրաստման հիմնահարցերին ու մոտեցումներին,
— հետազոտական գործընթացներում և հաստատության կառավարմանը ուսանողների ներգրավմանը,
— ուսանողների և դասախոսների շարժունությանը,
— Զալցբուրգյան սկզբուներին համապատասխան ասպիրանտական ծրագրերի վերանայմանն ու բարելավմանը,
— ՄՈՒՀ-երի միջազգայնացման խթանմանը:

Նշված հանդիպումների արդյունքում իրականացվել են՝

Կառավարում և վարչարարություն տիրույթում.

— ՄՈՒՀ-երի կառավարման կանոնակարգող փաստաթղթային հենքի և իրավական դաշտի վերանայում,
— հաստատությունների կառավարման համակարգի խնդիրների և խոչընդոտների ուսումնասիրություն և վերլուծություն:

Կրթական ծրագրերի տիրույթում.

— բուհերում ուսանողի գնահատման համակարգի ուսումնասիրություն. թույլ և ուժեղ կողմերի վերհանում,
— ըստ վերջնարդյունքների՝ կրթական ծրագրերի լրամշակում,
— ուսանողակենտրոն ուսումնառության հայեցակարգի մշակում,
— կրթական ծրագրերի գնահատման չափանիշների, մեթոդաբանության հստակեցում,
— կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ միջազգային բենչմարքինգի իրականացում,
— կրթական ծրագրերի համապատասխանեցում ՈԱՇ-ին,
— ընդհանուր մաթեմատիկական կոմպետենցիաների ձևավորման ծրագրի վերանայում ինժեներական և բնագիտական մասնագիտությունների համար,
— «Կրթության կառավարում» փորձնական մագիստրոսական ծրագրի մշակում և ներդրում,
— «Կրթության կառավարում» մասնագիտության փորձնական մագիստրոսական ծրագրի փորձաքննություն:

Դասախոսական կազմի տիրույթում.

— դասախոսների հավաքագրման մեխանիզմների հստակեցում,
— դասախոսների գնահատման և առաջխաղացման համակարգի բարելավում
— դասախոսների վերապատրաստումներ:

Հետազոտության տիրույթում.

– որոշ բուհերի ասպիրանտական կրթական ծրագրերի վերանայում՝ ըստ Զալցբուրգյան սկզբունքների,
– ասպիրանտական ծրագրերի SWOT վերլուծություն, միտված պարզելու ՀՀ-ում ասպիրանտական կրթության առկա իրավիճակը: Համապատասխանաբար՝ բարելավմանը միտված առաջարկությոնների փաթեթի մշակում,
– կրթական երրորդ մակարդակի որակի ապահովման շրջանակի ուրվագծում,
– հետազոտական ծրագրերի ճանապարհային քարտեզի մշակում:

Հասարակական պատասխանատվություն տիրույթում.

– շրջանավարտների և այլ շահակիցների հետադարձ կապի մեխանիզմների մշակում,
– շրջանավարտների տվյալների բազայի ստեղծում ուսումնական հաստատություններում, տվյալների հավաքագրում և վերլուծություն,
– ուսումնական հաստատություն-գործատու կապի ամրապնդման նպատակով շահակիցների կարիքների ուսումասիրման և վերլուծության ծրագրային ապահովման համակարգի մշակում,
– շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների ու գործիքակազմի մշակում և կիրառում,
— հաստատություն-աշխատաշուկա ազգային ցանցի ձևավորում, որը համակարգելու է համալսարան-աշխատաշուկա կապն ապահովող միավորի գործընթացները, խթանելու է շահակիցների միջև համագործակցությունը՝դրանով իսկ նպաստելով մասնագիտական կրթության բարելավմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցմանը:

Միջազգայնացման տիրույթում

— ՄՈՒՀ-երի արտաքին կապերով և միջազգայնացմամբ զբաղվող կենտրոնների պարտականությունների և պատասխանատվությունների հստակեցում,
— միջազգայնացման կենտրոնների գործունության ինքնավերլուծություն,
— ՄՈՒՀ-երի և ՈԱԱԿ-ի միջազգայնացման քաղաքականության մշակում:
— տրանսազգային կրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի ուսումնասիրություն,
— տրանսազգային կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների հավատարմագրման մեթոդաբանության մշակում,
— տրանսազգային կրթության որակի արտաքին ապահովման չափանիշների լրամշակում:

- Փորձագետների մոտ գրավոր և բանավոր հաղորդակցվելու, արդյունավետ և նպատակային փորձաքննություն, անկողմնակալ և օբյեկտիվ գնահատում իրականացնելու, ինչպես նաև մեծ ծավալի տեղեկատվություն վերլուծելու կարողությունները զարգացնելու նպատակով՝ ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացրել է փորձագետների վերապատրաստումներ, այդ թվում ուսանող-փորձագետների: Ուսումնասիրելով փորձագետների հետադարձ կապը վերապատրաստումների արդյունավետության վերաբերյալ՝կարելի է ասել, որ վերապատրաստումներն արդյունավետ են եղել (84%) և ծառայել են իրենց բուն նպատակին:
- ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացրել է հավատարմագրման գործընթացների համակարգողների վերապատրաստումներ, որպեսզի վերջիններս պատշաճ կերպով ապահովեն փորձագիտական խմբի ու մասնագիտական ուսումնական հաստատության միջև կապը և հանդես գան որպես հավատարմագրման մեթոդաբանության ապահովման երաշխիք: Հղվելով ուսումնասիրությունների և շահակիցների հետադարձ կապի վրա՝ կարելի է ասել, որ հիմնականում համակարգողներն իրենց պարտականությունները պատշաճ կերպով են իրականացրել, արդյունավետ աշխատել են թիմում՝դրսևորելով հաղորդակցվելու, կառավարչական, կազմակերպչական և թիմային աշխատանքի հմտություններ, հանդես եկել համբերատարությամբ: Ինչը վկայում է, որը կառույցն ունի բավարար ներուժ հավատարմագրման գործընթացներն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար:
- ՈԱԱԿ-ը՝ կարևորելով ուսանողների դերը որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացում, պարբերաբար իրականացրել է հանդիպումներ տարբեր հաստատությունների ուսանողների հետ՝ քննարկելով որակի պահովման գործընթացներում նրանց ներգրավման մեխանիզմները, կրթության որակի բարձրացման գործընթացում ուսանողների դերի կարևորությունը: Պարբերաբար իրականացվող հանդիպումների արդյունքում ուսանողներն ծանոթացել են ՀՀ-ում որակի ապահովման գործընթացներին, իսկ ՈԱԱԿ-ը ստեղծել է ուսանողների բազա՝ հետագայում հավատարմագրման գործընթացներում ներգրավելու նպատակով:
- 2014թ.-ին Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանների «Կրթության կառավարում» մասնագիտության ուսանողներն իրենց գիտաարտադրական պրակտիկան անցել

են ՈԱԱԿ-ում: Պրակտիկայի արդյունավետ կազմակեպման նպատակով մշակվել են հանձնարարականների փաթեթներ, նշանակվել են մենթորներ: Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացրել են կատարողականի վերաբերյալ հաշվետվություն՝ ըստ այդմ գնահատվել են: ՈԱԱԿ-ում անցկացրած պրակտիկայի արդյունքում, ապագա կրթության կառավարիչները ծանոթացել են՝

— ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացներին,
— հավատարմագրման գործընթացի կազմակերպմանն ու անցկացմանը,
— ՀՀ կրթական համակարգի մարտահրավերներին և զարգացման միտումներին:

- ՈԱԱԿ-ը 2014 թվականի դեկտեմբերի 1-ից և 5-ը կազմակերպել է «Որակի շաբաթ» միջոցառումների շարքը: Կրթության որակի շաբաթը մեկնարկեց ՏԵՄՊՈՒՍ-ի «ARARAT» ծրագրի ներկայացմամբ, որի շրջանակներում քննարկվեցին բուհ-գործատու կապի ամրապնդման առկա մարտահրավերներն ու լուծման ուղիները: Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ ALIGN, ARMENQA, TNE_QA ծրագրերի ձեռքբերումների և մարտահրավերների քննարկումը: Միջոցառման ժամանակ տեղացի և միջազգային գործընկերներն անդրադարձան՝

— որակավորումների ազգային շրջանակի վերանայված տարբերակին,
— մասնագիտության կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությանը ՈԱՇ-ին,
— ՀՀ-ում տրանսազգային կրթության ճանաչման խնդիրներին:

Դեկտեմբերի 3-ին Հյուսիսային համալսարանում ամփոփվեցին «ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ վերապատրաստումների արդյունքները: Ներկայացվեցին վերապատրաստումների ձեռքբերումները և արդյունավետության գնահատման արդյունքները: Միջոցառման ավարտին բոլոր մասնակիցներին հանձնվեցին “Մասնակցության հավաստագրեր”, իսկ առավել ակտիվ ներգրավվածություն ցուցաբերած մասնակիցներին շնորհվեցին “Որակի ապահովման գործընթացների աջակցի հավաստագրեր”: Միջոցառումների շարքն եզրափակվեց դեկտեմբերի 4-5-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում «Որակի մշակույթի ամրապնդումը ՀՀ մասնագիտական կրթական համակարգում. որակավորումների ճանաչման ապահովումը» շահակիցների երրորդ համաժողովով: Վերջինիս շրջանակներում քննարկեցին անցումային շրջանում իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների փորձը և ընդհանրացված արդյունքները, Հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման մոտեցումը, հավատարմագրման գործընթացների արդյունքում վերհանված թույլ կողմերը, մասնավորապես միջազգայնացման և հետազոտության տիրույթներում, քննարկվեցին վերջիններիս հաղթահարման հնարավոր ուղիները: Առավել մեծ շեշտադրում կատարվեց ինստիտուցիոնալ հավատարմագրումից ծրագրային հավատարմագրման անցման հիմնախնդիրներին:

- 2014թ.-ին մշակվել են ՈԱԱԿ-ի ոլորտային հանձնաժողովների և համալսարան – աշխատաշուկա ՀՀ ազգային ցանցի ձևավորման և գործունեության ընթացակարգի նախագիծը՝ ոլորտային հանձնաժողովների կառուցվածքը, հանձնաժողովների լիազորության ժամկետները, անդամներին ներկայացվող պահանջները,

գործառույթներն ու պարտականությունները: Նախատեսվում է նշված ընթացակարգը ներկայացնել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

ՀՀ մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներում կարևորվում է իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակի մասնագիտական ոլորտների և աշխատաշուկայի պահանջներին: Ներկայումս առաջնահերթ աշխատանքներ են տարվում «Տեղեկատվական տեխնոլոգիաների», «Կառավարման», ինչպես նաև «Կրթության» ոլորտների աշխատանքային խմբեր ստեղծելու ուղղությամբ: Ստեղծվել է առցանց համակարգ ոլորտների շահակիցների կարծիքի ուսումնասիրության համար: Գործընթացում ներգրավված են շահագրգիռ բուհերում հիմնված համապատասխան կառույցները և գործատուների միությունը: Այս մեխանիզմի գործառնումը կնպաստի ոլորտային ՈԱՇ-ների սահմանմանը, մասնագիտական կրթության անընդհատ բարելավմանը և զարգացմանը՝ ՄՈՒՀ-երի համար հանդիսանալով կրթական ծրագրերի բարելավման ուղենիշ (benchmark), ինչպես նաև կօժանդակի հաստատության կամ մասնագիտության կրթական ծրագրի գնահատման չափանիշների օբյեկտիվ սահմանմանը:

4. Միջազգայնացում

Իր գործունեության առաջին իսկ օրվանից ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր գործընթացները միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝դրանով իսկ նպաստելով ՀՀ մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում:

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերը 2014թ.-ին հիմնականում ծավալվել են հետևյալ գործընթացների շուրջ՝

- ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել INQAAHE, ENQA և EQAR միջազգային ցանցերի զարգացումներին, մասնակցել է ENQA աշխատանքային խմբերում, ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում և Ռուսաստանի “AKKORK” հավատարմագրման կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովում:
- Ակտիվ համագործակցում է Եվրոմիության և նախկին Խորհրդային Միության երկրների որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ: Համագործակցության հուշագիր է կնքվել Ռուսաստանի կրթության որակի վերահսկման և կարիերայի զարգացման գործակալության հետ:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ, ՀԲ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների, ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը:
- ՈԱԱԿ-ը, որպես գործընկեր հաստատություն, ներկայացվել է ՏԵՄՊՈՒՍ-ի 11 ծրագրերում, որոնք արժանացել են հավանության Եվրամիության կողմից և ներկայումս իրականացվում են: Ծրագրերը միտված են մասնագիտական

կրթության ոլորտի զարգացմանը, որակի ապահովման համակարգի ամրապնդմանը՝ անդրադառնալով համակարգում գոյություն ունեցող խնդիրներին:

Կրթական համակարգի զարգացման միտումներ և մարտահրավերներ

Ինչպես ՈԱԱԿ-ի նախաձեռնած մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման գործընթացների վերլուծությունը, միջազգային փորձագետների դիտարկումները, այնպես էլ իրականացված հավատարմագրման գործընթացներն ու ուսանողների հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մասնագիտական կրթության համակարգն ունի զարգացման հետևյալ միտումները և մարտահրավերները:

ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման խթան են հանդիսանում և նպաստում են դրանց հնարավորությունների զարգացմանը: ՈԱԱԿ-ը հանդես է գալիս որպես գործընկեր-խորհրդատու երկրում որակի ապահովման մշակույթի ձևավորման գործում: Ուսումնական հաստատությունները բավականին աշխատանքներ են իրականացնում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ որակի ապահովման տարբեր բաղադրիչներ մինչ այժմ բացակայել են: Սակայն, բնավ, չի նշանակում, որ մինչև որակի արտաքին ապահովմանը ներկայացվող պահանջների սահմանումը, ուսումնական հաստատությունները բավականաչափ ուշադրություն չեն դարձրել կրթության որակին: Այնուամենայնիվ, բացակայել են որակը խթանող համակարգված մոտեցումները և հաստատված ընթացակարգերը:

Իրականացվող բոլոր գործընթացների արդյունքում ի հայտ են եկել համակարգային խնդիրներ, որոնց լուծումները կբերեն կրթության որակի բարելավմանը: Խնդիրներից հատկապես հատկանշական է նշել հետևյալները՝

- մասնագիտական կրթական ծրագրերը բավարար արդիական և ուսանողակենտրոն չեն: Այնինչ՝ ուսանողակենտրոն ուսուցման ապահովումն իր բոլոր տիրույթներում ենթադրում է ճկուն կրթական ծրագրերի իրականացում, կրեդիտային համակարգի լիարժեք կիրառում, դասավանդման մեթոդների արդիականացում: Մասնագիտության կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները մասամբ են համապատասխանում ՈԱՇ-ին, հետևաբար, աշխատաշուկայի պահանջներին:
- Կրթական և հետազոտական գործունեությունը լիարժեք փոխկապակցված չէ:
- ՄՈՒՀ-երի կառավարումը մեծ մասամբ չի իրականացվում Պլանավորում- Իրականացում- Ստուգում- Բարելավում որակի կառավարման սկզբունքով:
- Պրոֆեսորադասախոսական կազմը հաճախ չի բավարարում արդի պահանջներին, բավարար չափով ներգրավված չէ նպատակային հետազոտություններում: Նրանց կապն աշխատաշուկայի հետ թույլ է կամ կրում է տեղեկատվական բնույթ: Առկա է դասախոսական անձնակազմի սերնդափոխության խնդիր: Բուհերը չունեն

դասախոսական կազմի վերապատրաստման, վերազինման և սերնդափոխման հստակ քաղաքականություններ:

- Հաստատությունների լաբորատոր բազաները հնաոճ են և բավարար չեն կրթական ծրագրերի իրականացման և ակնկալվող մասնագիտական վերջնարդյունքների ձևավորման համար:
- ՄՈՒՀ-երում դեռևս առաջնային նշանակություն չի տրվում որակի անընդհատ բարելավմանը, ցածր է շահակիցների մասնակցությունն այդ գործընթացում, որակի ապահովումը դեռևս չի դարձել մշակույթ: Որակի ապահովման գործընթացներում ներգրավված չեն բավարար հեղինակություն վայելող դասախոսներ: